ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

26 սեպտեմբերի հինգշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

130
(2980)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓԱՇԻՆՅԱՆԸ ՎՍՏԱՀ Է՝ 2026-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿՀԱՂԹԵՆ

Նիկոլ Փաշինյանն իր թիմակիցներին վստահեցրել է՝ առանց խոչընդոտների իրենք հաղթելու են ԱԺ հերթական՝ 2026 թվականի ընտրություններում. տեխնիկական, կազմակերպչական հարցերն են մնացել լուծելու: Նա հորդորել է թիմակիցներին, թե պետք է հետագայի՝ 2031-ի ընտրությունների մասին մտածել:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՔՊ-ականները վերջին շրջանում լուրջ մտահոգություններ են ունեցել, որ իրենց իշխանության օրոք Հայաստանի առջեւ ծառացած մի շարք անվտանգային խնդիրների ֆոնին իրենց վարկանիշը կտրուկ անկում է ունեցել, եւ գնալով իրավիճակն ավելի է բարդանում, ու կարող է 2026 թվականի ընտրությունների ժամանակ լուրջ խնդիրների առջեւ կանգնեն՝ ընդհուպ չկարողանան վերարտադրվելու համար անհրաժեշտ ձայներ հավաքել:

Նիկոլ Փաշինյանը, սակայն, հանգստացրել է թիմակիցներին՝ ասելով, որ մտահոգվելու կարիք չկա, 2026 թվականին իրենք իշխանության են մնալու, առանց որեւէ խոչընդոտի հաղթելու են ընտրությունները:

Փոխարենը, Փաշինյանը հորդորել է մտածել հաջորդ՝ 2031 թվականի ընտրությունների մասին:

«Ժողովուրդ» օրաթերթը թեմայի առնչությամբ ՔՊ խմբակցության պատգամավոր Արմեն Խաչատրյանից հետաքրքրվել է՝ արդյոք Նիկոլ Փաշինյանը ներկուսակցական հանդիպումների ժամանակ նման վստահեցում տվել է:

«Նման թեմա չի քննարկվել: Ընտրությունների արդյունքների վերաբերյալ կարող ենք վստահություն ունենալ միայն դրանց հաշվարկից հետո: Դա վերաբերում է ցանկացած ընտրությունների, անգամ ընտրությունից մեկ ժամ առաջ նման վստահություն ունենալը, կարծում եմ, ճիշտ չէ», - ասաց նա:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ առողջապահության նախարարի տեղակալ Լեւոն Հակոբյանը բիզնես կլաս դասի տոմսով ուղեւորվել է Նիդերլանդների թագավորություն 2 օրով: «Ժողովուրդ» օրաթերթի ձեռքի տակ հայտնված փաստաթղթի համաձայն՝ բիզնես կլաս դասի տոմսի արժեքը կազմել է 1.168 741 դրամ: Գիշերավարձի 2 օրվա համար առողջապահության նախարարի տեղակալը վճարել է 87.511 դրամ, իսկ 3 օրվա օրապահիկի համար՝ 140.103 դրամ, որի 1 օրվա վճարը հավասար է 111 եվրոյի: «Ժողովուրդ» օրաթերթը ո՛չ առողջապահության նախարարությունից, ո՛չ պաշտոնական այլ աղբյուրից այդպես էլ չգտավ տեղեկություն, թե ինչ նպատակով է փոխնախարարը բիզնես կլասով «շտապ գործուղվել» Նիդերլանդներ: Նշենք, որ Լեւոն Հակոբյանը 2019 թվականին աշխատել է որպես ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ, իսկ 2020-2023 թվականներին՝ «Տաշիր Ինվեստ Գրուպ» ՓԲԸ-ի տնօրեն: 2023-2024 թվականներին եղել է ՀՀ առողջապահության նախարարի խորհրդական: Բժշկական գիտությունների թեկնածու է: Առողջապահության նախարարի տեղակալ կրկին նշանակվել է 2024 թվականի մարտի 27-ին ու համարվում է նախարարի վստահելին եւ «աչքն ու ականջը» թիմի ներսում:



Կոռուպցիոն բնույթի հանցագործությունները ապականել են Հայաստանը: Ներկայիս իշխանությունները 2018-ին իշխանության եկան հենց «Կոռուպցիոն բոլոր շրջանակները վերացնելու» խոստումներով: Նախկին պաշտոնյաները հայտնվեցին նրանց թիրախում, իշխանությունը հարուցեց քրեական գործեր՝ կարծելով, որ կոռուպցիայի առաջ հաղթանակել է: Սակայն, համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալների, 2023 թվականի հունվար-հունիս ամիսներին կոռուպցիոն բնույթի հանցագործությունների թիվը տարվա առաջին կեսին կազմել է 833 դեպք, իսկ հեղափոխությունից մեկ տարի անց՝ 2019-ին՝ 632 դեպք: 4 տարվա ընթացքում 201 դեպքով ավելացել են կոռուպցիոն բնույթի հանցագործությունները: Հենց սա էլ հետհեղափոխական պոզով-պոչով կոռուպցիան է, որ կարծես մտնում է ղեկավար մարմինների ԴՆԹ-ի մեջ եւ դառնում ժառանգաբար՝ հորից որդուն փոխանցվող վարակ: Հարկ է նշել, որ 2024 թվականին կոռուպցիոն բնույթի հանցագործությունները արդեն իսկ կազմել են 648 դեպք. իսկ տարվա ավարտին դեռ 3 ամիս կա:

ՔՊ-ական պատգամավորներն արդեն երեք օր է ստորագրահավաք են սկսել արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանի պաշտոնանկության հարցով: Եթե պատգամավորների 1/3-ը՝ այսինքն 24 պատգամավոր, իրենց ստորագրությամբ համաձայնություն տա, ապա ՔՊ խմբակցության ղեկավարը Գրիգոր Մինասյանի պաշտոնանկության հարցը Փաշինյանի «սեղանին է դնելու»: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Գրիգոր Մինասյանի դեմ այս ստորագրահավաքի նախաձեռնողը Արփի Դավոյանն է՝ Անդրանիկ Քոչարյանի հանձնարարությամբ: Վերջինս ՔՊ նախաձեռնող նիստերից մեկի ժամանակ հենց Նիկոլ Փաշինյանի ներկայությամբ դժգոհել է Գրիգոր Մինասյանից եւ նրա պաշտոնանկության հարցն է բարձրացրել: Նիկոլ Փաշինյանն էլ թիմակիցներին ասել է՝ եթե բավարար չափով ստորագրություններ լինեն, ապա պատրաստ է քննարկել հարցը: Փաշինյանի նախնական «այո»-ն ստանալուց հետո՝ Արփի Դավոյանը լծվել է իր «պարտականության կատարմանը» եւ ստորագրահավաք նախաձեռնել: ՔՊ մեր աղբյուրների փոխանցմամբ՝ Գրիգոր Մինասյանի պաշտոնանկության հարցը վաղուց է ՔՊ-ի օրակարգում եղել, խմբակցության ֆորմատով դժգոհությունները մի քանի անգամ քննարկվել ու մարել են, իսկ հիմնական պատճառն էլ նախարարի եղբոր՝ հետախուզման մեջ գտնվող, Վատիկանում ՀՀ նախկին դեսպան Միքայել Մինասյանի գործոնն է եղել: Մեզ փոխանցում են նաեւ, որ թեեւ Գրիգոր Մինասյանին հեռացնելու հարցը այս օրերին ՔՊ-ի հիմնական օրակարգն է, բայց դեռ նրան փոխարինող անգամ չունեն: Բացի այդ, Գրիգոր Մինասյանին հրամանով պաշտոնանկ անելուց հետո, ավելի բարդ փորձություն է սպասվում ՔՊ-ականներին, քանի որ պետք է նաեւ Մինասյանի «քաղաքական ընկերոջը»՝ ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանին հեռացնեն պաշտոնից, ինչը առավել դժվար է իրավական առումով, քանի որ այն անկախ սահմանադրական մարմին է, եւ ուղղակի հրամանով ազատել չեն կարող: Ուստի, հետաքրքիրն առջեւում է:

ԶՐՈՒՅՑ

«ՉԵՄ ԿԱՐՈՂ ԱՍԵԼ, ԹԵ ԵՂԲՈՐ ԳՈՐԾՈՆԸ ՉԻ ԱԶԴԵԼ»

ԱԺ ՔՊ խմբակցությունը արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանին պաշտոնանկ անելու համար ստորագրահավաք է սկսել: Այս մասին հայտնել է պատգամավոր Հովիկ Աղազարյանը:

Նա նաեւ հայտնեց, որ ստորագրահավաքն արդեն 2 օր է՝ մեկնարկել է. պատգամավորները դժգոհություն ունեն նախարարի գործունեության հետ կապված:

ArmLur.am-ը հարցի վերաբերյալ զրուցել է ՔՊ պատգամավոր Հովիկ Աղազարյանի հետ:

-Պարոն Աղազարյան, հայտնի դարձավ, որ իշխող խմբակցությունը ստորագրահավաք է մեկնարկել արդարադատության նախարարին պաշտոնանկ անելու համար, եւ դիմելու եք Նիկոլ Փաշինյանին: Կխնդրենք նշել պատճառները՝ ինչու հանկարծ նման մտադրություն առաջացավ, եւ ինչքան ժամանակ է, որ ստորագրահավաքը մեկնարկել է:

-Այսօր (խմբ.) ստորագրահավաքի երկրորդ օրն է, եթե չեմ սխալվում: Պատճառների մասին հստակ չեմ կարող ասել, որովհետեւ դեռ քննարկման առարկա չեն դարձել մեզ համար: Նրանք, ովքեր հարմար են գտնում միանալ նախաձեռնությանը, հետո պետք է մյուսներին ներկայացնեն այն հիմնավորումները եւ պատճառները, որը իրենց մղել է այդ քայլը կատարելու:

-Այսինքն՝ նախաձեռնողը չի՞ ներկայացրել հիմնական պատճառների մասին:

-Մասնավոր պատճառներ հայտնի չեն, միայն ընդհանուր պատկերի մակարդակով: Եթե նույնիսկ վաղը կամ մյուս օրը ներկայացվեն այդ պատճառները, դեռ չի նշանակում, որ դրանք բավարար են այդ քայլին գնալու համար: Չհաշված, որ այդ պատճառների մեջ կարող է մեծ դեր ունենալ սուբյեկտիվիզմը, եւ որոշումը արժանահավատ չլինի: Հետեւաբար, դա ընդամենը քննարկման առարկա դարձնելու հնարավորություն կստեղծի:

-Պարոն Աղազարյան, վերջին շրջանում հատկապես մեծ աղմուկ բարձրացրեց այն, որ արդարադատության փոխնախարար նշանակվեց մեկը, ով լուսանկար ունի ՀՀ երկրորդ նախագահի գրքով եւ մտերիմ է նրա դստեր հետ, այսինքն՝ առնչություն ունի երկրորդ նախագահի հետ, ու հենց դրան հաջորդեց այս գործընթացը: Ինչպե՞ս կմեկնաբանեք:

-Այդ դրվագը ինքին չի կարող պատճառ հանդիսանալ, որովհետեւ եթե որեւէ մեկը այս կամ այն կերպ առնչություն է ունեցել Ռոբերտ Քոչարյանի կամ Սերժ Սարգսյանի եւ կամ նրանց մերձավոր շրջապատի հետ, դա չպետք է պատճառ հանդիսանա, որ տվյալ անձը խնդիր ունենա որեւէ պաշտոն զբաղեցնելու մասով: Հետեւաբար՝դա չի կարող բավարար հիմք լինել նախարարի գործունեությունը կասկածի տակ դնելու համար:

-Իսկ ե՞րբ եք պատրաստվում արդեն պաշտոնապես դիմել Նիկոլ Փաշինյանին:

-Երբ ստորագրահավաքին միանալ ցանկացող եւ այս քայլին համաձայն անձանց կողմից հավաքված կլինեն բոլոր ստորագրությունները ու գործուղման մեջ գտնվող մեր գործընկերները, որոնք եւս պատրաստակամ են միանալու, կմիանան, այդ ժամանակ կդիմենք:

-Իսկ կա՞ն պատգամավորներ, ովքեր կտրականապես դեմ են եղել այս նախաձեռնությանը եւ ասել են, որ չեն մասնակցելու:

-Իհարկե կան, քանզի մեր խմբակցությունում միշտ չէ, որ միահամուռ դիրքորոշում ենք ունենում բոլորս, պատահում է հաճախ տեսակետների բախում, բայց երբ որոշում ենք կայացնում՝ բոլորս դառնում ենք նույն որոշման կրողը՝ անկախ նրանից, թե ինչ դիրքորոշում ունի մեզնից յուրաքանչյուրը:

-Պարոն Աղազարյան, իսկ արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանի եղբոր՝ Միքայել Մինասյանի գործոնը կա՞ այս գործընթացում, քանի որ վերջինս հակաիշխանական տեսակետներ ունի:

-Չեմ կարող ասել, թե նրա եղբոր գործոնը զրոյի է հավասար, թե ինչքան ազդեցություն ունի՝ չգիտեմ, բայց որ ունի, միանշանակ է:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ԲԵՆԶԻՆԻ ՊԱՅԹՅՈՒՆԻՑ ՄԵԿ ՏԱՐԻ ԱՆՑ

Արցախի Հանրապետությունում բենզինի պահեստի պայթյունի հետեւանքով զոհվեց 218, վիրավորվեց 120 քաղաքացի:

Երեկ բենզինի պայթյունի մեկ տարին էր լրացել: Սեպտեմբերի 25-ին Ստեփանակերտ-Ասկերան ավտոճանապարհի հարակից տարածքում՝ բենզինի պահեստում, ուժեղ պայթյուն էր տեղի ունեցել:

Այն, պայթյուն էր պատերազմի ժամանակ, որն ավելի շատ վնաս պատճառեց, քան Արցախի հանձնման մարտերը:

Արցախի տեղեկատվական շտաբը սեպտեմբերի 25-ի առավոտյան հայտնել էր, որ Արցախից ՀՀ տեղափոխվել ցանկացող բոլոր քաղաքացիներին տրվելու է անվճար վառելիքի հնարավորություն ժամը 14:00-ից՝ Ստեփանակերտի 5 բենզալցակայաններում: Օրվա ընթացքում հայտնի դարձավ նաեւ, որ վառելիքի ստացման նպատակով քաղաքացիների մեծ խցանումներ են առաջացել բենզալցակայանների մերձակա տարածքներում:

2023 թվականի սեպտեմբերի 25-ին՝ժամը 19:00-ի սահմաններում, պայթյուն որոտաց, որը դարձավ անհետ կորածների, տասնյակ զոհերի եւ հարյուրավոր մարդկանց վիրավորման պատճառ:

Նույն օրվա դրությամբ վիրավորների մեծամասնության վիճակը գնահատվում էր ծանր եւ ծայրահեղ ծանր:

Արցախի հայաթափմանը զուգահեռ, երբ Կոռնիձորում եւ Գորիսում տեղ ու դադար չկար, պայթյունից տուժածներին ուղղաթիռով տեղափոխում էին Հայաստան: Արցախի բժշկական հնարավորությունները բավարար չէին մարդկանց կյանքը փրկելու համար:

ՀՀ առողջապահության նախարարությունը սեպտեմբերի 26-ի առավոտյան հայտնեց, որ բժիշկների թիմը ուղղաթիռով, անհրաժեշտ դեղորայքով եւ բժշկական պարագաներով մեկնել է դեպի Ստեփանակերտ:

Ավելի ուշ ԱԳՆ-ից հայտնեցին, որ աճյունները եւ մասունքները պայթյունի տարածքից հանվել եւ տեղափոխվել են Երեւանի Դատաբժշկական փորձաքննության կենտրոն՝ ԴՆԹ թեստի միջոցով նույնականացում իրականացնելու համար: Կան նաեւ 50-ից ավելի անհետ կորածներ:

Մինչ այսօր գործի վերաբերյալ հրապարակված որեւէ նորություն չկա, քննությունն ընթանում է:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 221

2020 թվականի մայիսի 9-ին ՀՀ պաշտպանության նախարարությունում, բարձրագույն սպայական կազմին ԶՈՒ ԳՇ նորանշանակ պետ Օնիկ Գասպարյանին ներկայացնելիս Նիկոլ Փաշինյանը հայտարարեց. «Հայաստանում զինվորականները պետք է լավ ապրեն»:

Սակայն այդ ելույթից հետո ՀՀ կառավարությունը շարունակ հետեւողականությամբ ՀՀ ոստիկանության աշխատակիցների աշխատավարձերն է բարձրացրել, իսկ զինծառայողներինը՝ ոչ այդքան: Ավելին՝ զինվորականները շատ վատ պայմաններում են ապրում նաեւ զորամասերում. կենցաղը զորամասերում՝ծակ վրաններ, ցեխերի մեջ մահճակալ կամ պարզապես՝ բաց երկնքի տակ: Կառավարությունը, բարելավելու փոխարեն, քրեական գործեր է հարուցել տեսանյութեր նկարահանելու եւ այդ պայմանները ցուցադրելու համար:

Զինվորների բնակության վատ պայմանների պատճառը երբեմն նաեւ ողբերգական ավարտ է ունեցել: Մասնավորապես, 19.01.2023թ. Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղում տեղակայված տնակներից մեկում հրդեհից զոհվեց 15 զինվոր:

ՀՀ–Ն ՈՒՆԻ ԵՄ ԱՆԴԱՄ ԴԱՌՆԱԼՈՒ ԲՈԼՈՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Կիպրոսը կշարունակի աջակցել Հայաստանի ջանքերին՝ ավելի սերտ համագործակցություն ունենալ Եվրամիության հետ: Մամուլի համար կատարած համատեղ հայտարարության ժամանակ այս մասին հայտարարեց Կիպրոսի պաշտպանության նախարար Վասիլիս Պալմասը:

«Հավատում ենք, որ Հայաստանի՝ օրենքի գերակայության եւ թափանցիկ կառավարման, ժողովրդավարական բարեփոխումների ուղղությամբ հանձնառությունն ամբողջովին համահունչ են Եվրամիության արժեքների եւ սկզբունքների հետ»,- ընդգծեց Պալմասը:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2–ԻՆ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԿԳՆԱ ԱԺ

Սրբազան շարժման առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանը հայտարարել է, որ շարժումը վերսկսելու է ակտիվ գործունեությունը հոկտեմբերի 2-ին, Հանրապետության հրապարակում հանրահավաքով:

Որոշ հանգամանքներ հաշվի առնելով, մասնավորապես՝ սեպտեմբերի 28-ին եւ 29-ին Սրբազան Մյուռոնօրհնության եւ Մայր տաճարի վերաօծման արարողությունները, Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանը որոշել է հավաքը հետաձգել մինչեւ հոկտեմբեր:

«Այդ օրը հավաքվելով Հանրապետության հրապարակում՝ մտնելու ենք պայքարի ինտենսիվ եւ հետեւողական փուլ, համառ, աննահանջ, համբերատար պայքարի փուլ՝ հաղթանակով երաշխավորված», - հայտարարել է նա:

Նշենք, որ այդ օրը՝հենց հոկտեմբերի 2-ին, նաեւ խորհրդարան է գալու Նիկոլ Փաշինյանը՝ պատգամավորների հարցերին պատասխանելու:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Հայաստան խմբակցության պատգամավոր Գեղամ Մանուկյանը հայտարարեց, որ իրենք ներկա են լինելու թե՛ ԱԺ նիստին, թե՛ հավաքին:

Պատիվ ունեմ խմբակցության պատգամավոր Աննա Մկրտչյանը եւս հայտարարեց, որ մասնակցելու են կառավարության հետ հարցուպատասխանին, եւ, ինչպես միշտ, մասնակցելու են նաեւ ընդդիմադիր շարժման հավաքին:

ԱԺ պատգամավոր Գառնիկ Դանիելյանից հետաքրքրվեցինք՝ հնարավո՞ր է այդ օրը հավաքի մասնակիցները նաեւ ԱԺ շենքի մոտ գործողություններ իրականացնեն: Վերջինս, սակայն, նշեց, որ դեռ չեն ցանկանում հավաքի հետ կապված փակագծեր բացել:

ՄՈՍԿՎԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ Է ԻՍՐԱՅԵԼԻ ՀԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԸ

Մոսկվան խստորեն դատապարտում է Իսրայելի կողմից Լիբանանի նկատմամբ իրականացվող լայնածավալ ռազմական հարձակումները՝ ասված է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովայի մեկնաբանության մեջ:

Նա անթույլատրելի է որակել հարձակումները, որոնց զոհ են դառնում քաղաքացիական անձինք:

«Կոչ ենք անում անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները, ինչը կկանխի հետագա արյունահեղությունը եւ պայմաններ կստեղծի իրավիճակը քաղաքական-դիվանագիտական կարգավորման հուն տեղափոխելու համար»,- ընդգծել է ՌԴ ԱԳՆ խոսնակը:

Զախարովայի խոսքով՝ Մոսկվան պատրաստ է համակարգել ջանքերը միջազգային եւ տարածաշրջանային գործընկերների հետ՝ նման աղետալի սցենարը կանխելու նպատակով:

«Ելնում ենք նրանից, որ տարածաշրջանի ցանկացած պետության անվտանգությունը չպետք է ապահովվի ուրիշների հաշվին»,- հավելել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչը:

ԱՎԵԼԻ ՔԱՆ 50 ՀՐԹԻՌ՝ ՌԱԶՄԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

«Հըզբալլահը» շարունակում է հարվածներ հասցնել իսրայելական ռազմական օբյեկտներին եւ բնակավայրերին Վերին եւ Ստորին Գալիլեայում: Ինչպես հաղորդում է Al Mayadeen հեռուստաալիքը, շիա մարտիկները մի քանի խոշոր տրամաչափի հրթիռներ, ինչպես նաեւ հրթիռային համակարգերից ավելի քան 50 արկ են արձակել դեպի Իսրայելի տարածք:

Հիմնական հարվածը հասցվել է սահմանամերձ Կիրյաթ Շմոնա քաղաքին: Բեյթ Հիլել, Մարգալիոտ եւ Միսգավ Ամ բնակավայրերում օդային հարվածների ազդանշաններ են հնչել, մի շարք վայրերում հրդեհներ են գրանցվել: Հեռուստաալիքի տվյալներով՝ տեղեկություն է ստացվել սահմանից զգալի հեռավորության վրա գտնվող իսրայելական Աֆուլա, Տիբերիա եւ Սաֆեդ քաղաքների շրջակայքում հրթիռների ընկնելու մասին:

«Հըզբալլահի» ռազմական տեղեկատվական ծառայության Telegram ալիքում հրապարակված զեկույցում ասվում է «թշնամու թիրախների հաջող ջախջախման» մասին:

Առավոտյան շիա կործանիչները գնդակոծել են Իսրայելի հյուսիսում գտնվող Մեգիդո ռազմական օդանավակայանը եւ Ռամաթ Դավիդ ավիաբազան: Հարձակումների ժամանակ օգտագործվել են «երկիր-երկիր», «Ֆադի-1» եւ «Ֆադի-2» հրթիռներ:

ՀԱՅ ԴԱՏԻ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱՌԱՋ ՍԻՐԱՇԱՀՈՒՄ Է

ՀՀ անկախության օրվա առթիվ ԱՄՆ նախագահի դեմոկրատ թեկնածու, երկրի գործող փոխնախագահ Քամալա Հարիսը հրապարակել է ուղերձ՝ ուղղված ամերիկահայությանը: Դրանում Հարիսը աջակցություն է հայտնել «Լեռնային Ղարաբաղից տեղահանված հայերի՝ իրենց տներն անվտանգ վերադառնալու իրավունքին»: Դեմոկրատ թեկնածուն նաեւ նկատել է. «մենք երբեք չպետք է մոռանանք Հայոց ցեղասպանությունը», ինչպես նաեւ՝ հանձնարարել է «Հայաստանի եւ իր հարեւանների միջեւ ինտենսիֆիկացումը, անկախությունը եւ տարածքային ամբողջականությունը հարգող կայուն խաղաղությանը հասնելուն»:

Անդրադառնալով փոխնախագահ Հարիսի հայտարարությանը՝ Հայ դատի Վաշինգտոնի գրասենյակի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը նկատել է. «Որպես փոխնախագահ՝ Քամալա Հարիսը մի ամբողջ տարի ուներ գործելու Արցախի վերադարձի իրավունքի համար՝ ԱՄՆ առաջնորդությամբ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձեւի միջոցով, սակայն նա այս մասին սկսել է խոսել (ամերիկահայերի, ոչ թե ՄԱԿ-ի անդամ երկրների հետ) ընտրություններից միայն 40 օր առաջ, երբ հայ ընտրողները կարող են վճռորոշ լինել առանցքային «ճոճվող» նահանգներում: Հատկանշական է, որ փոխնախագահ Հարիսը, որի վարչակազմը զինել է Ադրբեջանի ցեղասպանական շրջափակումը եւ հարձակումը Արցախի վրա, մատ անգամ չբարձրացրեց եւ նույնիսկ ձայն չբարձրացրեց 2023 թ. Ադրբեջանի ագրեսիայի դեմ: Նույնիսկ քարոզարշավի հռետորաբանության մակարդակով նա ոչ մի բառ չի ասել Ադրբեջանին տրամադրվող ամերիկյան ռազմական սպառազինությունն ու օժանդակությունը դադարեցնելու կամ այլ կերպ Բաքվին, իր հանցագործությունների համար, պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ: Քաղաքական գործիչները՝ նախագահական թեկնածուները եւ այլն, չեն կարող դիրքավորվել որպես հայերի բարեկամներ՝ միաժամանակ հրաժարվելով պատասխանատվության ենթարկել Ալիեւին կամ չկարողանալով զսպել ադրբեջանական ագրեսիան»:

Շաբաթներ առաջ, Հայ դատի Ամերիկայի հանձնախումբը հանդես էր եկել ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի եւ գործող նախագահ Ջո Բայդենի վարչակազմերին ուղղված քննադատությամբ: Հանձնախումբը, հաշվի առնելով նախընտրական ժամանակահատվածը, ընտրական մրցապայքարի կողմերին առաջարկել էր կոնկրետ գործողություններ, որոնք էական նշանակություն կունենան հայկական շահերի պաշտպանության տեսանկյունից, մասնավորապես՝ Ադրբեջանին տրամադրվող ամերիկյան օժանդակության անհապաղ վերացում, ադրբեջանցի ռազմական հանցագործների նկատմամբ թիրախային պատժամիջոցների սահմանում, Արցախի ժողովրդի վերադարձի իրավունքի երաշխավորում, արցախցի փախստականներին մարդասիրական օգնության էական աճ եւ այլն:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում նախընտրական զարգացումների ներկա փուլում ամերիկահայերը կարող են առանցքային դեր ունենալ 2024 թ. նախագահական ընտրությունների արդյունքների վրա, հատկապես մի շարք առանցքային կարեւորության նահանգներում, որտեղ թեկնածուների ձայները չափազանց մոտ են իրար, մասնավորապես Արիզոնայում, Ջորջիայում, Միչիգանում, Նեւադայում, Հյուսիսային Կարոլինայում, Փենսիլվանիայում եւ Վիսկոնսինում: Այդ նահանգներում առկա են հայահոծ խոշոր համայնքներ:

ՀՅԴ Բյուրոյի Հայ դատի կենտրոնական գրասենյակ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԿԲ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԸ ԱՌՈՒԾԱԽՈՎ Է ՁԲԱՂՎԱԾ

Կենտրոնական բանկի խորհրդի անդամ Լեւոն Սահակյանը պաշտոնի նշանակվել է 2022 թվականին: Մինչ կենտրոնական բանկ գալը Սահակյանը 2021 թվականին եղել է ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական, 2019-2021 թվականներին՝ ՀՀ Ազգային ժողովի փոխնախագահի խորհրդական, նաեւ պատգամավորի օգնական:

Ուսումնասիրելով Լեւոն Սահակյանի հայտարարագիրը՝ հետաքրքիր հանգամանքներ են ի հայտ գալիս:

Նախ՝ անշարժ գույքի մասին

ԿԲ խորհրդի անդամը 2014 թվականին ժառանգություն է ստացել 4 անշարժ գույք, 2 հողամաս եւ մեկ անհատական բնակելի տուն, որոնք գտնվում են Լոռու մարզում:

Հիմա՝ հետաքրքիր հանգամանքի մասին

ԿԲ անդամ Լեւոն Սահակյանը մեկ տարում՝ 2023 թվականին, գնել է 2 մեքենա 17 մլն 175 հազար ընդհանուր արժեքով:

2018 թվականի արտադրության MERCEDES-BENZ մակնիշի մեքենան Սահակյանը ձեռք է բերել DanDessert խմորեղենների խանութ ցանցից 7 մլն 400 հազար դրամ արժողությամբ: Հաջորդը կրկին նույն մակնիշի մեքենա է, սակայն 2020 թվականի արտադրության՝ 9 մլն 775 հազար դրամ արժողությամբ:

DanDessert-ից ծեռք բերված մեքենան վաճառվել է գրեթե 3 մլն դրամով ավելի թանկ՝ 9 մլն 120 հազար դրամով:

Ալեն Սիմոնյանի մտերիմ ընկեր Սահակյանի հայտարարագրերն ուսումնասիրելով՝ տեսնում ենք, որ նրա հիմնական անելիքը 2021-2023 թվականների ընթացքում եղել է թանկարժեք մեքենաների առքուվաճառքը:

Օրինակ՝ 2021 թվականին Կենտրոնական բանկի խորհրդի անդամի կրկնակի հավակնորդ Սահակյանը ձեռք է բերում KIA մակնիշի ավտոմեքենա, վաճառում BMW մակնիշի մեքենան, 2022-ին ձեռք է բերում 2 BMW եւ տարվա վերջում վաճառում ողջ ավտոպարկը՝ KIA-ի հետ միասին 3 մեքենա:

Սահակյանի հաշվետու տարվա եկամուտը կազմել է 56 մլն 210 հազար դրամ, որից 50 մլն 933 հազարը վարկ է ՀՀ տարբեր բանկերից:

Վարկերից 46 մլն դրամն անշարժ գույքի ձեռքբերման իրավունքի համար վերցված հիփոթեքն է:

Ստացվում է, որ Մեքենաներից բացի, Սահակյանը գնել է նաեւ բնակարան:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԲԱՅՐԱՄՈՎԸ՝ ԻՐԱՆԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Սեպտեմբերի 24-ին ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի 79-րդ նստաշրջանի շրջանակում տեղի է ունեցել Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Ջեյհուն Բայրամովի եւ Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին գործերի նախարար Աբբաս Արաղչիի հանդիպումը: Այս մասին հայտնում է Ադրբեջանի արտաքին գործերի նախարարությունը:

Բայրամովն իրանցի գործընկերոջը տեղեկացրել է հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման գործընթացի մասին: Նա ասել է, որ վերջնական խաղաղության պայմանագրի կնքման ամենալուրջ խոչընդոտը Հայաստանի մի շարք իրավաքաղաքական փաստաթղթերում՝ հատկապես Սահմանադրության մեջ «Ադրբեջանի դեմ տարածքային պահանջների» առկայությունն է:

Ադրբեջանի ԱԳ նախարարը իրանական կողմին հայտարարել է, թե «Հայաստանում շարունակվում են արագ տեմպերով ռազմականացվել՝ դա որակելով ռեւանշիստական միտումներ»:

«Սա վնասում է տարածաշրջանում անվտանգության եւ կայունության հաստատման մեր ջանքերին»,- ասել է Բայրամովը:

ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ԿԱԴՐԱՅԻՆ ԻՆՉ ՓՈԽԱՏԵՂՈՒՄՆԵՐ ԵՆ ԵՂԵԼ

ՀՀ քննչական կոմիտեում տեղի է ունեցել կադրային փոխատեղում:

Մասնավորապես՝ ՀՀ քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանի համապատասխան հրամաններով Ռաֆայել Վարդանյանը նշանակվել է ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության պետ՝ազատվելով ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության պետի տեղակալի պաշտոնից:

Իսկ Ազատ Գեւորգյանը նշանակվել է ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության պետի տեղակալ՝ ազատվելով ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության պետի պաշտոնից:

Արդարադատության առաջին դասի խորհրդական Ռաֆայել Հարությունի Վարդանյանի կենսագրությունը

Ծնվել է 1987 թվականի հոկտեմբերի 06-ին Երեւան քաղաքում:

2008թ. ավարտել է Երեւանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, ապա 2010թ. ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

2015 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն եւ ստացել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Աշխատանքային գործունեությունը

2008-2011թթ. - ՀՀ պաշտպանության նախարարությունում՝ որպես օպերատիվ բաժանմունքի հետաքննիչ

2011-2012թթ. - ՀՀ պաշտպանության նախարարության N զորամասի հետաքննչական խմբի պետ

2012-2014թթ. - ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության իրավաբանական խմբի իրավախորհրդատու

IV-IX.2014թթ. - ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության 2-րդ /հատկապես կարեւոր գործերի քննության/ վարչության մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության բաժնի քննիչ

2014-2018թթ. - ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչության ՀԿԳ քննիչ

2018-2019թթ. - ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչության կոռուպցիոն, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների եւ կիբեռհանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ /ՀԿԳ ավագ քննիչ/

2019-2020թթ. - ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչության կոռուպցիոն, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ /ՀԿԳ ավագ քննիչ/

2020-2021թթ. - ՀՀ քննչական կոմիտեի հատուկ հանձնարարությունների, կազմակերպական-վերլուծական եւ քրեագիտական գլխավոր վարչության քրեագիտական վարչության պետ

2021-2024թթ. - ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հատկապես կարեւոր գործերի քննության վարչության պետ

II-IX.2024թ. - ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության պետի տեղակալ

Արդարադատության առաջին դասի խորհրդական Ազատ Լյուդվիգի Գեւորգյանի կենսագրությունը

Ծնվել է 1984 թվականի հունիսի 12-ին Գյումրի քաղաքում:

2005թ. ավարտել է Երեւանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը:

2005-2007թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում:

Աշխատանքային գործունեություն

2009-2013թթ. - ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Շիրակի մարզի քննչական բաժնի Ախուրյանի քննչական բաժանմունքի քննիչ, նույն բաժնի ավագ քննիչ, ապա Գյումրի քաղաքի Կումայրու քննչական բաժանմունքի ավագ քննիչ

2014-2015թթ. - Շիրակի մարզի դատախազության դատախազ

2015-2016թթ. - Կոտայքի մարզի դատախազության դատախազ

2016-2019թթ. - Երեւան քաղաքի դատախազության ավագ դատախազ

III-IX.2019թ. - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության եւ դատական ակտերի բողոքարկման վարչության դատախազ

2019-2021թթ. - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության եւ դատական ակտերի բողոքարկման վարչության ՀՀ գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազ

2021-2022թթ. - ՀՀ քննչական կոմիտեի տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության առաջին վարչության պետ

I-X.2022թ. - ՀՀ քննչական կոմիտեի տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության պետ

2022-2024թթ. - ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության պետ:

ՀՀ ՔԿ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԴԱԴԱՐԵՑՎԵԼ Է «ԿԵՉԱՌԻՍ» ՀՅՈՒՐԱՆՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը սեպտեմբերի 24-ին դադարեցրել է ՀՀ ԱԺ նախկին պատգամավոր Միհրան Պողոսյանին պատկանող «Կեչառիս» հյուրանոցի գործունեությունը:

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի որոշման հիման վրա՝ հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում 2024թ. սեպտեմբերի 16-ին հարուցվել է կատարողական վարույթ:

Որոշման համաձայն՝ պետք է.

1. ամբողջությամբ դադարեցնել ՀՀ Կոտայքի մարզ, քաղաք Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 20 հասցեում գտնվող օբյեկտի (փաստացի՝ հյուրանոց) շահագործումը՝ մինչեւ հայտնաբերված խախտումների վերացումը:

2. Ամբողջությամբ դադարեցնել «ԿԵՉԱՌԻՍ ՀՈԹԵԼ» ՍՊ ընկերության աշխատանքները ՀՀ Կոտայքի մարզ, քաղաք Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 20 հասցեում՝ մինչեւ հայտնաբերված խախտումների վերացումը:

3. Սույն որոշման կատարման ժամկետ սահմանել անհապաղ՝ ելնելով հանրային շահից:

Կողմերը պատշաճ ծանուցվել են վարույթի հարուցման եւ հետագա կատարողական գործողությունների մասին:

Սեպտեմբերի 19-ին հարկադիր կատարողն է այցելել է նշված հասցե՝ հյուրանոցի տնօրենին որոշումներն առձեռն հանձնելու եւ կատարողական գործողությունների մասին տեղեկացնելու: Դրանց վերաբերյալ կազմվել է արձանագրություն: Տրվել է ժամանակ մինչեւ սեպտեմբերի 24՝ ժամը 15:00՝ որոշման պահանջները կամովին կատարելու համար:

Սեպտեմբերի 24-ին տարածք այցելության ընթացքում պարզվել է, որ հյուրանոցի գործունեությունը չի դադարեցվել, արդյունքում՝ հարկադիր կատարողների կողմից հյուրանոցի շահագործումը դադարեցվել է մինչեւ հայտնաբերված խախտումների վերացումը:

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ ԿԱՌԱՎԱՐՉԻՆ

Արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանի որոշմամբ՝ սնանկության գործով կառավարիչ Վահագն Դավթյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության:

Վահագն Դավթյանի նկատմամբ կիրառվել է «նախազգուշացում» կարգապահական տույժը:

Այս մասին տեղեկացնում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունից:

ԱՀԱՋԱՆԳ ԲԱՆՏԻՑ

ԿԱԼԱՆԱՎՈՐԸ ԱՍԵՂԸ ՄՏՑՐԵԼ Է ՄԱՐՄՆԻ ՄԵՋ

Կալանավորը «Դատապարտյալների հիվանդանոցում» ասեղը մտցրել է մարմնի մեջ:

Երեկ «Ժողովուրդ» օրաթերթի հետ կապ հաստատեց «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում պահվող քաղաքացի Վանիկ Դանիելյանը եւ պատմեց, որ իր առողջական վիճակը շատ վատ է, սակայն դա հաշվի չի առնվում, եւ նրան ցանկանում են տեղափոխել «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ:

Դանիելյանը, ի պատասխան այս որոշման, մարմնի մեջ ասեղ է մտցրել՝ այդ կերպ արտահայտելով իր բողոքը:

Ավելի վաղ հենց նույն Վանիկ Դանիելյանը բաց նամակ էր ուղարկել «Ժողովուրդ» օրաթերթին, որը ներկայացնում ենք ստորեւ.

«Ես՝ Վանիկ Դանիելյանս, կալանավորվել եմ նախորդ ամսվա 30-ին, այժմ գտնվում եմ հակակոռուպցիոն կոմիտեի քննիչի կալանքի տակ եւ ներկա պահին «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում եմ:

Նախ ասեմ՝ 1 տարում 2 անգամ հակակոռուպցիոն օպերները եկել, հարցրել են, զանգել են ասել՝ «գործ կա, արի՛»:

Չեմ գնացել, ոչ մի անգամ պաշտոնական ոչ մի գրությունով չեմ ծանուցվել, ոչ մի անգամ քննիչ Նիկոլայ Պավլովը չի ուղարկել ծանուցում. անօրինական կերպով իր ընկեր դատախազ Հայկ Մանասյանի հետ որոշում են բերման ենթարկել, այն դեպքում, երբ օրենքով ոչ մի անգամ չեմ ծանուցվել:

Նշեմ, որ երբ ես քաղաքում եմ եղել, գրեթե միշտ տանն եմ եղել, դրա բերման ենթարկելը ո՞րն է.... Ու այժմ իմ հոգեկան վիճակը վատացել է, անվասայլակին եմ: Ես եմ, որ խափանման միջոցս չեն փոխում՝ թեկուզ տնային կալանքի:

2-րդ խմբի հաշմանդամ եմ, հաշվառված եմ «Ավան» հոգեբուժարանում ու այժմ վատ վիճակում եմ, չեմ կարողանում ինքնուրույն շարժվել, լողանալ, խափանումը չեն փոխում...

Խնդրում եմ՝ տպագրեք, թող նույնիսկ միջազգային ատյանները տեսնեն»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝սեպտեմբերի 24-ից 25-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 115 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԸ ՏՈՒԺՈՒՄ ԵՆ

Զինկոմիսարիատները, համայնքապետարանները խնդիրներ են ունենում 25-օրյա վարժական հավաքների մասնակիցներին հավաքագրելու գործում. մարդիկ դժվարությամբ են մասնակցում դրանց: Դա իր պատճառներն ունի: Վարժական հավաքների մասնակիցները 25-օրյա հավաքի համար պետական բյուջեից ստանում են մոտ 180 հազար դրամ աշխատավարձ: Հավաքների շատ մասնակիցներ մշտական աշխատանք ունեն,կամ օրավարձով աշխատողներ են, օրավարձով բանվորների օրական վաստակը 10 հազար դրամ է: Ըստ օրենքի՝ վարժական հավաքի մասնակցի գործատուն պետք է հատուցի 25 օրվա ծառայության համար նվազագույնը 250 հազար դրամ եւ ավել աշխատավարձի եւ 180 հազար դրամի տարբերությունը: Սակայն գործնականում գործատուն չի հատուցում այդ տարբերությունը, եթե դա վերաբերում է օրավարձու բանվորներին, արհեստավորներին: Պետությունը չի հատուցում նաեւ վարժական հավաքների ընթացքում հիվանդացածների բուժման ծախսերը: Նոյեմբերյան համայնքի Ոսկեպար գյուղի ռազմագիտության ուսուցիչ Նվեր Բեգլարյանը, 2023 թվականի ամռանը մասնակցելով վարժական հավաքի, ծառայության ընթացքում հիվանդացել է, նրան ուղեգրել են, Երեւանի բժշկական կենտրոններից մեկում հետազոտվել է, որի համար վճարել է 100 հազար դրամ: Նրան այդ գումարը չեն փոխհատուցել, Նվերը դիմել էր Հայաստանի ՄԻՊ-ին, սակայն, Նվերի վկայությամբ, մարդու իրավունքների պաշտպանը, բացի թղթեր լրացնելուց, ուրիշ ոչնչով չի օգնել խնդիրը լուծելու համար:

ԱԴՐԲԵՋԱՆԻՆ ՀԱՆՁՆՎԱԾ ՀԵՆԱԿԵՏԻՑ ԴՐՈՇԸ ՀԱՆԵԼ ԵՆ

Ոսկեվան գյուղի սահմանագոտում գտնվող «Նոր տարի» դիրքից ադրբեջանական մեծ դրոշը հանել են: Հայտնի չէ, թե ինչն է դրա պատճառը. հավանաբար, ադրբեջանական զինուժը հին, մաշված դրոշը փոխելու է նորով: Սահմանազատման անվան տակ սահմանագոտու այդ հատվածում Ադրբեջանին հանձնվեցին տարածքներ, սակայն այդ գործընթացով տակտիկական մեծ նշանակություն ունեցող այդ հենակետը, որը բարձունքի վրա է տեղակայված, չպետք է հանձնվեր Ադրբեջանին. դա նախատեսված չէր: Սակայն Բաղանիս-Այրում գյուղի տարածքները հանձնելուց հետո՝ շատ է դժվարացել «Նոր տսրի» հենակետը պաշտպանող զինծառայողներին սննդի, խմելու ջրի մատակարարումը: Այդ հենակետը պաշտպանող զինծառայողներն այդ պատճառով շատ դժվարություններ են կրե. որոշ ժամանակ անց այդ հենակետը ստիպված հանձնել են, դրա վրա բարձրացել է ադրբեջանական դրոշը: Դրանից քիչ հեռու՝ ավելի ներքեւ, գտնվում է հայկական հենակետը, որի վրա բարձրացված է հայկական եռագույնը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԱՐՑԱԽԻՑ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ

«Աֆեյան» հիմնադրամը ֆինանսական աջակցություն է տրամադրել Արցախից տեղահանված ընտանիքներին: Ավելի լավ աշխարհ կառուցելու նպատակով լուծումներ ձեւավորելու եւ դրանք առաջ մղելու առաքելությամբ գործող «Աֆեյան» հիմնադրամը երեկ հայտարարեց Արցախից ավելի քան 100,000 տեղահանված անձանց աջակցելու համար նախկինում հայտարարված 2 միլիոն ԱՄՆ դոլարի տեղաբաշխման ավարտի մասին: Այս ծրագիրը Լեռնային Ղարաբաղի բռնի տեղահանված բնակչությանն աջակցելուն ուղղված Աֆեյանների ընտանիքի նախորդ նախաձեռնությունների շարունակությունն է:

«Արցախի ժողովուրդը տարիներ շարունակ ենթարկվել է դաժան եւ աներեւակայելի ճնշումների, եւ էթնիկ զտման հետեւանքով իրենց տներից բռնի վտարվելուց հետո՝ այժմ կանգնած է իր համար նոր միջավայրում կյանքը վերսկսելու իրողության առջեւ», - ասում են «Աֆեյան» հիմնադրամի հոգաբարձուներ Նուբար եւ Անա Աֆեյանները. «Արցախի ժողովուրդն ունի հանրային եւ մասնավոր հատվածների լայնածավալ աջակցության կարիքը, որպեսզի ստանա փրկությունից վերածնունդ, այնուհետեւ՝ դեպի բարգավաճում ճանապարհն անցնելու համար անհրաժեշտ ռեսուրսներն ու օգնությունը»:

Աֆեյանները նշել են. «Մենք ոգեշնչված ենք կազմակերպությունների եւ անհատների ստվար խմբի ջանքերով, որոնք անդադրում աշխատում են Արցախի ժողովրդին օգնության ձեռք մեկնելու ուղղությամբ»:

Վերջերս «Աֆեյան» հիմնադրամը դրամաշնորհ է հատկացրել ՅՈՒՆԻՍԵՖ-ի ԱՄՆ գրասենյակին՝ Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի ծրագրերի իրականացման համար: Դրանք կկենտրոնանան առավել խոցելի խմբի՝ երեխաների եւ դեռահասների հետ աշխատանքների վրա: Ծրագիրը գործելու է 18 ամիս եւ ուղղված է լինելու հոգեկան առողջության եւ հոգեսոցիալական ծառայությունների հասանելիության ապահովմանը, ինչպես նաեւ սոցիալական ներառման հնարավորությունների բարելավմանը հատկապես այն տարածքներում, որտեղ նման ծառայությունների հասանելիությունը սահմանափակ է:

Ծրագրի նպատակն է օգնել դեռահասներին եւ նրանց խնամակալներին՝տրամադրելով համակարգային աջակցություն, ինչն անհրաժեշտ է տրավմայի եւ սթրեսի դեմ պայքարելու, հասարակության մեջ թիրախավորումները նվազեցնելու եւ հյուրընկալող համայնքներում հոգեկան բարեկեցությունն ու սոցիալական համախմբվածությունը խթանելու համար:

«Աֆեյան» հիմնադրամը ֆինանսավորել ու աջակցել է ստորեւ նշված հայկական կազմակերպություններին եւ ծրագրերին.

- AIWA - EmpowerPath ծրագիր՝ ուղղված Արցախի կանանց հմտությունների զարգացմանը, աշխատանքի հնարավորությունների տրամադրմանը եւ ձեռներեցության աջակցությանը:
- AGBU - Ծրագրերը ներառում են Նաիրի ճամբարի ընդլայնում, Արցախի տեղահանված բնակչության աշխատունակության բարձրացմանն ուղղված հմտությունների զարգացման ծրագրեր, ձմեռային մարդասիրական եւ անհապաղ օգնություն եւ Հայաստանում տեղահանված արցախցիների ապագայի վերաբերյալ CIVITTA կազմակերպության ուսումնասիրություն:
- American University of Armenia / US Embassy - Անգլերենի ուսուցման ծրագիր Շիրակի մարզում հանգրվանած երիտասարդների համար:
- Armenia Artsakh Fund - Տեղահանված արցախցիներին դեղորայքի եւ մարդասիրական օգնության տրամադրում:
- Armenian Spiritual Revival Foundation - Արցախի տեղահանված բնակչությանը հոգեկան առողջության բարելավման խմբային եւ համայնքային ծառայությունների մատուցում եւ տեղացի մասնագետների համար հոգեբանական-սոցիալական վերապատրաստման ծրագրերի կազմակերպում:
- AYB School - 10 արցախցի աշակերտի համար կրթաթոշակների տրամադրում:
- Children for Armenia Foundation (COAF) - Աջակցություն «Հույս Արցախի համար» նախագծին, որի առանցքում վաղ մանկական զարգացումն է, դպրոցական ինտեգրումը եւ COAF-ի SMART կենտրոնի հասանելիության ապահովումը, ինչը ներառում է արտ- թերապիայի դասընթացներ եւ փախստականների կարիքներին հարմարեցված այլ հնարավորություններ:
- Teach for Armenia - «Կրթություն արտակարգ իրավիճակներում» ծրագիր՝ ուղղված նոր միջավայրում արցախցի ուսանողների ինտեգրմանը: Այն ներառում է մանկավարժների վերապատրաստում, արտադպրոցական միջոցառումներ, հոգեկան առողջության եւ հոգեսոցիալական աջակցություն, ինչպես նաեւ՝ ուսանողներին ակադեմիական օգնության տրամադրում:
- UWC Dilijan - Արցախից երկու ուսանողի համար երկու տարվա կրթաթոշակի տրամադրում, ինչպես նաեւ 10 ուսանողի ամառային ճամբարի ֆինանսավորում:

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԴԱԼ

ՆԱԽԱԳԱՀԸ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼ Է ՅՈՒՅԱԲԵՐԱԾ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՀՀ նախագահը «Ռուսական երկաթուղիներ» եւ ՀԿԵ ընկերությունների ղեկավարներին պարգեւատրել է Երախտագիտության մեդալով: Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանի հրամանագրով «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ գլխավոր տնօրեն - խորհրդի նախագահ Օլեգ Բելոզյորովը եւ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ գլխավոր տնօրեն Ալեքսեյ Մելնիկովը պարգեւատրվել են Երախտագիտության մեդալներով:

Ինչպես նշված է նախագահի հրամանագրում, մեդալները շնորհվել են «հայ-ռուսական բարեկամական կապերի ամրապնդման եւ 2024 թվականի մայիսին Հայաստանի հյուսիսում տեղի ունեցած ավերիչ ջրհեղեղի հետեւանքների վերացման գործում նշանակալի ավանդի համար»:

Երախտագիտության մեդալը շնորհվում է պետական, տնտեսական, սոցիալական, գիտակրթական, հասարակական ոլորտներում ծավալած գործունեության, առողջապահության, կրթության, մշակույթի ոլորտների զարգացման գործում անձնական մեծ ավանդի, երկարամյա նվիրված եւ արդյունավետ աշխատանքի համար:

2024 թվականի մայիսի 25-ին երկարատեւ տեղումների հետեւանքով, որին հաջորդել է Դեբեդ գետի վարարումը, տեղի է ունեցել բնակավայրերի ջրածածկում, ինչպես նաեւ վնասվել են ավտոճանապարհային եւ երկաթուղային ենթակառուցվածքները, այդ թվում՝ 1800 մ գծային ճանապարհ, կոնտակտային ցանցի 45 հենասյուներ, մի շարք քարշային ենթակայանների էլեկտրամատակարարման խափանում, երկաթուղային ավտոմատացման միջոցների վնասում: Սահմանափակ ժամանակահատվածում իրականացվել է հսկայական քանակությամբ հողային աշխատանքներ, վերականգնվել են երկաթուղային գծի կիլոմետրեր, կոնտակտային ցանցերը, կապի համակարգերը եւ քարշային ենթակայանները: Մինչեւ երթեւեկության վերականգնումը ստեղծվել է առաջնահերթ բեռները Հայաստան հասցնելու ժամանակավոր սխեմա: «Ռուսական երկաթուղիներ» եւ ՀԿԵ ընկերությունները ավելի քան 800 մլն դրամ են հատկացրել ավերիչ աղետի հետեւանքները վերացնելու համար:

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 16 պատահար. 23 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԵՏՎՃԱՐԻ ՉԱՓԸ՝ 12 %

Կենսաթոշակների եւ նպաստների անկանխիկ վճարումների դեպքում հետվճարի չափը սահմանվել է 12 %՝նախկին 10%-ի փոխարեն, առավելագույն չափը՝ 6000 դրամ՝նախկին 5000 դրամի փոխարեն: Այս մասին հայտնում են ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից:

Կոմունալ ծառայությունների դիմաց վճարումներից հետվճար այսուհետ չի հաշվարկվում:

ՏՈՄՍԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԿԳՈՐԾԱՐԿՎԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1–ԻՑ

Հանրային տրանսպորտում ներդրված նոր միասնական տոմսային համակարգը ամբողջությամբ կգործարկվի հունվարի 1-ից: Կառաջարկվեն վճարման տարբեր եղանակներ. թղթային մեկանգամյա օգտագործման QR code-ով տոմսեր, բջջային հավելված, մշտական օգտագործման ավտոբուսային եւ բանկային քարտեր:

Team Telecom Armenia

Team Telecom Armenia-ն հայտարարում է ընկերության պատմության մեջ ցանցային ենթակառուցվածքների եւ ծրագրային ապահովման ամենամեծ արդիականացման ծրագրի մեկնարկի մասին: Վերազինման աշխատանքները կսկսվեն սեպտեմբերի 30-ին՝ ժամը 20:00-ին եւ կավարտվեն հոկտեմբերի 1-ին՝ ժամը 15:00- ին: Այս ժամանակահատվածում անհասանելի կլինեն վճարումները, այդ թվում՝ ընկերության գրասենյակներում, My Team հավելվածի, բանկային եւ երրորդ կողմի ծառայությունների միջոցով: Հնարավոր է նկատվեն սահմանափակումներ բջջային, ֆիքսված կապի ու ինտերնետ ծառայություններում, ինչպես նաեւ My Team հավելվածի աշխատանքում: Վերազինման արդյունքում կթարմացվեն ցանցային ու սերվերային սարքավորումները եւ ծրագրային ապահովումը, որը կառավարում է ընկերությունում առկա բոլոր այլ համակարգերն ու հաճախորդների սպասարկման ընթացքը:

Արդիականացման այս ծրագիրն իրականացվում է ծառայությունների ու սպասարկման որակը նոր մակարդակի բարձրացնելու նպատակով:

Հնարավոր անհարմարությունների համար կանխավ հայցում ենք բաժանորդների ներողամտությունը եւ շնորհակալություն ենք հայտնում ըմբռնման համար:

ԿՈՐԵԼ Է

Ես՝ Մանուշակ Անդրուշի Մարտիրոսյանս, տարիներ առաջ կորցրել եմ Լենինականի երկաթուղային տրանսպորտի տեխնիկումի (այժմ Գյումրու պետական տեխնիկական քոլեջ) դիպլոմը՝ ԼՏ № 001782, գրանցում՝ թիվ 1015, 29.06.1987թ.:

Կորցրած դիպլոմը համարվում է անվավեր:

Գտնողին խնդրում ենք զանգահարել +374 77 585 124 հեռախոսահամարով:

ԿԵՆՍՈՒՆԱԿ ԲԻԶՆԵՍ ԵՎ ՁԱՐԳԱՑՈՒՄ

ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԵԿՆԱՐԿԸ

Հայաստանում առաջին անգամ անցկացվում է նորարարական ադրանքների համահայկական Innovate Armenia մրցույթը: Մրցույթի մեկնարկը տրվել է սեպտեմբերի 24-ին: Նպատակն է՝ խրախուսել եւ աջակցել Հայաստանում տաղանդավոր ստեղծարարների կողմից նորարարական ֆիզիկական ադրանքների զարգացմանը եւ միջազգային շուկաներում կենսունակ բիզնես հիմնելուն: Մրցույթը նախաձեռնել եւ իրականացնում է TCF Armenia ընկերությունը:

Մրցույթին կարող են մասնակցել թե՛ անհատներ, թե՛ թիմեր ամբողջ Հայաստանից: Սա աննախադեպ հնարավորություն է մրցույթի մասնակիցների համար՝համապատասխանեցնելու իրենց գաղափարները միջազգային չափանիշներին, դարձնելու դրանք մրցունակ ամբողջ աշխարհում, հավաքելու գումար նախնական արտադրության համար, ձեռք բերելու կապեր եւ օգտակար ծանոթություններ: Անհրաժեշտ կլինի ներկայացնել գաղափարի նախապատմությունը, պրոդուկտի ամբողջական եւ մանրակրկիտ նկարագիրը՝ գծապակերներով եւ հավանական սկետչերով, ինչպես նաեւ շուկայի ուսումնասիրություն ու զարգացման ծրագիր: Բնականաբար, պետք է առանձնահատուկ ընդգծել, թե ինչով է նախագիծն առանձնահատուկ եւ արժանի վերածվելու իրական ապրանքի:

«Մենք հաճախ ենք օգնում տարբեր միջազգային ստեղծարարների եւ ընկերությունների մրցունակ նորարարական ֆիզիկական ապրանքներ ստեղծելու եւ շուկա հանելու գործընթացում: Մենք մշտապես գիտակցել ենք, որ Հայաստանում կա չիրացված ներուժ եւ հետաքրքիր նախագծեր, որոնք արժանի են իրական ապրանք դառնալու եւ միջազգային շուկաներ դուրս գալու: Նորարարական ապրանքների համահայկական Innovate Armenia մրցույթը լուծելու է այդ խնդիրը, եւ մենք նպաստելու ենք տեղի գաղափարների իրագործմանը: Վստահ ենք, որ շատ հետաքրքիր հայտեր ենք ստանալու, եւ ժյուրին կայացնելու է բավականին բարդ որոշումներ»,-նշում է TCF-ի համահիմնադիր Մարիամ Համբարձումյանը:

Ժյուրին գնահատելու է մասնակիցների նորարարական գաղափարները, իրագործելիությունը, շուկայի պոտենցիալը, թիմի կամ անհատի մասնագիտական ներուժը եւ ներկայացման հմտությունները:

Առաջին հորիզոնականը զբաղեցրած անհատը կամ թիմը կստանա համապարփակ աջակցություն՝ գաղափարի վավերացումից մինչեւ արտադրություն, ներառյալ՝ մենտորության հնարավորություն ոլորտի փորձագետների հետ, շուկայի համապատասխանության ստուգում, նախատիպի ստեղծման ծառայությունների հասանելիություն, քրաուդֆանդինգի աջակցություն, ինչպես նաեւ նեթվորքինգի հնարավորություններ՝ներդրողների եւ արտադրողների մեծ բազայի հետ:

Երկրորդ տեղը զբաղեցրած թիմը կամ անհատը հնարավորություն կունենա օգտվել շուկայի համապատասխանության ստուգման ծառայությունից, կմասնակցի մենթորության, ինչպես նաեւ կստանա պոտենցիալ շուկա մուտք գործելու համար պրոդուկտի նախապատրաստման ուղղորդում:

Երրորդ հորիզոնականում հայտնված թիմը կամ անհատը կօգտվեն շուկայի համապատասխանության ստուգման ծառայությունից եւ մենտորությունից:

Նշենք, որ մրցույթի մասնակցության հայտերի ներկայացման վերջնաժամկետը հոկտեմբերի 23-ն է: Մինչեւ վերջնաժամկետը հոկտեմբերի 8-ին եւ 21-ին կանցկացվեն խորհրդատվական հանդիպումներ:

ԸՆԹԱՑԻԿ

ԵԿԱՄՈՒՏ ՍՏԱՑՈՂ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿ

Պետական եկամուտների կոմիտեն տեղեկացնում է, որ հարկ վճարողների կողմից 2024 թվականի օգոստոս ամսվա համար ներկայացված եկամտային հարկի եւ սոցիալական վճարի հաշվարկների տվյալներով՝ եկամուտ ստացող աշխատատեղերի թվաքանակը կազմել է 751 816, ինչը գերազանցել է նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշը՝ 34 536-ով կամ 4.8%-ով:

«ՏԱԹԵՎԵՐ»–Ը՝ ԱՌԱՋԱՏԱՐ ՃՈՊԱՆՈՒՂԻ

Սյունիքի մարզում գտնվող «Տաթեւեր» ճոպանուղին կրկին առաջադրվել է զբոսաշրջության ոլորտում World Travel Awards 2024 միջազգային հեղինակավոր մրցույթի՝ «2024 թվականի աշխարհի առաջատար ճոպանուղի» անվանակարգում: Նախագիծն արդեն երկու անգամ հաղթել է այս անվանակարգը 2021 եւ 2023 թ.-ին: Այժմ այն նույնպես մրցում է Բոլիվիայի, Բրազիլիայի, Վիետնամի, Կանադայի, Նոր Զելանդիայի, ԱՄՆ-ի եւ Հարավային Աֆրիկայի ճոպանուղիների հետ:

«Տաթեւեր» ճոպանուղին աշխարհի ամենաերկար մարդատար ճոպանուղին է: Այն գրանցվել է «Գինեսի» ռեկորդների գրքում ոչ միայն իր երկարության շնորհիվ, որը 5752 մ է, այլեւ որպես աշխարհում այս մասշտաբի միակ ինժեներական կառույց, որը կառուցվել է ընդամենը 10 ամսվա ընթացքում: Ճոպանուղու ստեղծման նախագիծն իրականացրել է ավստրիա-շվեյցարական Doppelmayr/Garaventa ընկերությունը, որը ճոպանուղիների շինարարության ոլորտում առաջատարն է:

Այս տարի «Տաթեւեր» ճոպանուղին կնշի իր գործունեության 14 տարին: 2010 թ.-ից ի վեր ճոպանուղուց օգտվել է ավելի քան 1,300,000 մարդ: Նրա շնորհիվ Հայաստանում յուրաքանչյուր հինգերորդ զբոսաշրջիկ այցելում է Տաթեւ:

«Տաթեւեր» ճոպանուղու տնօրեն Մարիյա Բուտենկոն կոչ է անում քվեարկել՝ ընդգծելով, թե ինչ ազդեցություն կունենա հաղթանակը. «Այն կօգնի մեզ շարունակել նպաստել տեղական համայնքի զարգացմանը, մշակութային ժառանգության պահպանմանը եւ Հայաստանում զբոսաշրջության ոլորտի առաջխաղացմանը: Ուստի կոչ եմ անում բոլորին քվեարկել եւ Հայաստանի համար այս կարեւոր ձեռքբերման մաս լինել»:

«Տաթեւեր» ճոպանուղու օգտին քվեարկելու համար անհրաժեշտ է՝

1. Անցնել մրցանակաբաշխության պաշտոնական կայքի հղումով
2. Գրանցվել էլեկտրոնային փոստով
3. Հաստատել ստացված էլ. հաղորդագրությունը
4. Սեղմել Start Voting կոճակը
5. Ընտրել World բաժինը
6. Ընտրել 63-րդ տողը՝ World's Leading Cable Car Ride 2024
7. Քվեարկել Wings of Tatev, Armenia -ի օգտին:

Քվեարկության վերջնաժամկետը 2024 թ.-ի հոկտեմբերի 20-ն է:

«Տաթեւեր» ծրագիրն իրականացվում է Ռուբեն Վարդանյանի եւ Վերոնիկա Ջոնաբենդի կողմից մեկնարկած «Տաթեւի վերածնունդ» ծրագրի շրջանակներում: Ճոպանուղին շահույթ չհետապնդող նախագիծ է, որից ստացված ողջ հասույթն ուղղվում է Տաթեւի վանքի վերականգնմանն ու համայնքների զարգացմանը:

Ճոպանուղին կառավարվում է Impulse Business Management ընկերության կողմից:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՏՈՆ

ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ՝ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ

Մաեստրո Սիփան Օլահը եւ Լոնդոնում գործող հայտնի «Քլինգեն» կամերային անսամբլը հաջողությամբ ավարտեցին իրենց առաջին համերգային շրջագայությունը Հնդկաստանում՝ գերելով հանդիսատեսին Կալկաթայում, Նյու Դելիում եւ Չեննայում: Այս եզակի ելույթները կազմակերպվել էին Հնդկաստանում Հայաստանի դեսպանության կողմից՝ Կալկաթայի Սուրբ Նազարեթ հայկական եկեղեցու, Հնդկաստանի մշակութային կապերի խորհրդի (ICCR), Չեննայում Հայաստանի պատվավոր հյուպատոսի եւ Քլինգեն երգչախումբ եւ մշակութային ասոցիացիայի հետ համատեղ: Երաժիշտներ Հայարփի Եղիկյանը՝ սոպրանո, Պոլինա Շարաֆյանը՝ ջութակ, Ջեֆ Հակոբ Մուրադյանը՝ հոբոյ, Նիկիտա Դեմիդենկոն՝ դաշնամուր Լոնդոնից՝ համագործակցելով Վաչե Թադեւոսյանի հետ՝ անգլիական փող, Սոմնաթ Մախալը՝ թավջութակ Կալկաթայից, իրենց կատարումներով գերեցին հանդիսատեսին:

Մշակութային Փոխանակման Տոն Համերգաշարը նվիրված էր Հայաստանի Հանրապետության անկախության 33 ամյակին եւ ֆրանսահայ լեգենդար երգիչ, կոմպոզիտոր Շառլ Ազնավուրի ծննդյան 100 ամյակին: Ներկայացումներում հնչեցին հայ նշանավոր կոմպոզիտորների գլուխգործոնները, այդ թվում՝ Կոմիտասի, Արամ Խաչատրյանի, Առնո Բաբաջանյանի, Ղազարոս Սարյանի եւ Ռոբերտ Ամիրխանյանի գործերը, որոնցից շատերը առաջին անգամ էին հնչում Հնդկաստանում:

Կալկաթա - Համերգաշարի բացման հանդիսությունը տեղի ունեցավ 2024 թվականի սեպտեմբերի 18-ին՝ Կալկաթայի Հայկական քոլեջում եւ Մարդասիրական ակադեմիայում: Միջոցառումը կազմակերպվել էր Հայաստանի դեսպանության եւ Կալկաթայի Սուրբ Նազարեթ հայկական եկեղեցու համագործակցությամբ: Ներկայացումներն իրենց մասնակցությամբ արժեւորեցին մաեստրո Սիփան Օլահը, Քլինգեն կամերային անսամբլը եւ Հայկական քոլեջի քառաձայն երգչախումբը: Այս միջոցառումը նշանավորվեց առաջին հայկական դասական համերգի կազմակերպմամբ Կալկաթայում՝ նշելով Հայաստանի եւ Հնդկաստանի միջեւ պատմական խոր կապերը:

Նյու Դելի - 2024 թվականի սեպտեմբերի 19-ին եւ 20-ին, Քլինգեն կամերային անսամբլի համերգները տեղի ունեցան համապատասխանաբար Grand Hotel- ում եւ ICCR-ի «Ազադ Բհավան» համերգասրահում: Սեպտեմբերի 19-ի միջոցառումը կարեւորվեց Հնդկաստանի արտաքին գործերի պետական նախարար Կիրթի Վարդան Սինգհի մասնակցությամբ, ով միացավ Հայաստանի դեսպան Վահագն Աֆյանին՝ նշանավորելու այս կարեւոր մշակութային իրադարձությունները: Միջոցառմանը ներկա էին ավելի քան 50 դեսպաններ, դիվանագետներ եւ ավելի քան 200 հարգարժան հյուրեր, ովքեր մեծ հիացմունքով ընդունեցին մաեստրո Օլահի ղեկավարած անսամբլի կատարումները: Երրորդ համերգի ընթացքում անսամբլի անդամները Ռոտարի շրջանների կողմից արժանացան հատուկ մրցանակների՝ ICCR-ում իրենց վառ ելույթի համար, որն արժանացավ հանդիսատեսի բուռն ծափահարությունների եւ հիացմունքի:

Չեննայ - Համերգային շրջագայության եզրափակիչ համերգը տեղի ունեցավ 2024 թվականի սեպտեմբերի 21-ին՝ Taj Club House հյուրանոցում: Այս միջոցառումը կազմակերպվել էր Չեննայում Հայաստանի պատվավոր հյուպատոս Շիվկումար Իշվարանի հետ համատեղ: Ելույթները, որոնք եւս մեկ անգամ նշեցին Հայաստանի անկախությունը եւ Ազնավուրի հարյուրամյակը, արժանացան հիացմունքի եւ հատուկ հուշանվերների՝ Հայաստանի եւ Հնդկաստանի միջեւ մշակութային փոխանակման գործում ունեցած ներդրման համար:

Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՆՆԱ ԱՄՐՈՅԱՆԸ՝ ԲՐՈՆԶԵ ՄԵԴԱԼԱԿԻՐ



Աննա Ամրոյանը դարձել է Ծանրամարտի երիտասարդների աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր:

Մարզիկը երկամարտում գրանցել է 228 կգ արդյունք: Աննա Ամրոյանը նաեւ նվաճել է փոքր բրոնզե մեդալ՝ հրում վարժությունում գլխավերեւում պահելով 128 կիլոգրամանոց ծանրաձողը:

ՈՒԵՖԱ-Ն ՎՃԱՐՆԵՐԻ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳ Է ԸՆԴՈՒՆԵԼ

Եվրոպական ֆուտբոլային ասոցիացիաների միության (ՈՒԵՖԱ) գործադիր կոմիտեն հաստատել է նոր համակարգ՝ 2024-2027 թվականներին եվրագավաթներում չմասնակցող ակումբներին համերաշխության վճարների բաշխման համար:

Այդ ակումբների հատկացումների բաժինը կաճի 4%-ից մինչեւ 7%՝ կանխատեսվող 4,4 միլիարդ եվրո եկամտի շեմից: Այդ գումարը կկազմի 308 միլիոն եվրո, ինչը գրեթե 80%-ով ավելին է նախորդ շրջանի հատկացումից:

Բացի դրանից, հինգ առաջատար ֆեդերացիաների (Անգլիա, Իսպանիա, Իտալիա, Գերմանիա եւ Ֆրանսիա) համար սահմանվել է առավելագույն սահմանաչափ՝ 10 միլիոն եվրո: Մնացած 50 ասոցիացիաների համար միջոցների ծավալը կաճի ներկայիս 135 միլիոնից մինչեւ 258 միլիոն եվրո: Այս միջոցների 70%-ը կբաշխվի ՈՒԵՖԱ-ի ցուցանիշային աղյուսակի տեղերի հիման վրա, իսկ 30%-ը՝ ըստ ամենաշատ եկամուտ ունեցող ակումբի, յուրաքանչյուր ասոցիացիայի համար:

ՈՒԵՖԱ-ի գործադիր կոմիտեի նիստը կայացել է Պրահայում:

ՌԱՖԱՅԵԼ ՎԱՐԱՆԸ՝ ԿԱՐԻԵՐԱՆ ԱՎԱՐՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ֆրանսիացի պաշտպան Ռաֆայել Վարանը հայտարարել էր կարիերան ավարտելու մասին: 31-ամյա ֆուտբոլիստը խոսք է հղել այդ առիթով:

Վարանի վերջին ակումբը եղավ «Կոմոն», որտեղ ֆրանսիացին անցկացրեց ընդամենը 23 րոպե՝ փոխարինվելով ծնկի ծանր վնասվածքի պատճառով:

Վարանն իր կարիերայի ընթացքում հանդես է եկել Մադրիդի «Ռեալի» եւ «Մանչեսթեր Յունայթեդի» կազմում: 2018 թվականին ֆուտբոլիստը Ֆրանսիայի ընտրանու հետ դարձել է Աշխարհի չեմպիոն:

ԳՐՈՂԻ ՄԱՀՎԱՆ 54-ԱՄՅԱԿՆ Է

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԵՋ ԿԱՄ ՊԱՐԶԱՊԵՍ ՌԵՄԱՐԿ

Էրիխ Մարիա Ռեմարկը գերմանացի գրող է, ով առավել հայտնի է իր հակապատերազմական վեպերով: Ռեմարկը մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմին, ինչը հետագայում մեծ ազդեցություն ունեցավ նրա գրականության վրա:

Նրա ամենահայտնի ստեղծագործություններից մեկը՝ «Արեւմուտքի ճակատում փոփոխություն չկա» (1929), պատկերում է պատերազմի անարդարությունը եւ դրա կործանարար ազդեցությունը զինվորների հոգեբանության վրա: Այս վեպը համարվում է հակապատերազմական գրականության գլուխգործոցներից մեկը:

Ռեմարկի ստեղծագործությունները հաճախ կենտրոնանում են մարդկային կորուստների, ապրումների եւ պատերազմի պատճառած վերքերի վրա: Նացիստական վարչակարգի ժամանակ նրա գրքերը արգելվեցին Գերմանիայում, եւ գրողը ստիպված էր արտագաղթել ԱՄՆ:

Ռեմարկի մյուս հայտնի գործերն են «Վերադարձ» (1931), «Հաղթական կամար» (1946), «Կյանքի կայծը» (1952), որոնք նույնպես շոշափում են պատերազմից հետո մարդկային կյանքերի վերականգնման եւ պայքարի թեմաները:

Չնայած նրան, որ Ռեմարկը երկրային կյանքում չկա, նրա ստեղծագործությունները մինչ օրս ամենաընթերցվածներից եւ սիրվածներից են, որոնք ցավոք սրտի կամ բարեբախտաբար՝ չեն կորցնում իրենց արդիականությունը:

Սեպտեմբերի 25-ը Էրիխ Մարիա Ռեմարկի հիշատակի օրն է:

«Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է գրողի հայտի մի քանի մտքեր:

- «Պատերազմը չի ավարտվում, երբ կրակոցները դադարում են: Այն ապրում է մարդկանց մեջ երկար ժամանակ՝ քանդելով նրանց ներսից»:
- «Մենք ապրում ենք՝ սպասելով մահվան, եւ մահանում՝ երազելով կյանքը»:
- «Մարդկային կյանքի ամենաբարձր արժեքը հանգստությունն է: Մենք այն փնտրում ենք ամբողջ կյանքում»:
- «Սերը չի հանդուրժում բացատրություններ, նրան արարքներ են պետք»:
- «Մարդիկ հաճախ իրենց մեջ ատում են այն, ինչ չեն կարողանում փոխել»:

Ահա այսպես է հանրահայտ եւ սիրված գրողը գրել եւ հասել իր ընթերցողի հոգու խորքը:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

● Հոկտեմբերի 28-ին՝ ժամը 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում կցուցադրվի «Մեծ լռություն» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2.000-3.000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ սկզբունքով է վճարվում նպաստի պակաս մասը:

Ռիտա Մինասյան (24 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Սխալ հաշվարկելու հետեւանքով պակաս վճարված նպաստի գումարի վճարումը կատարվում է առանց ժամկետի սահմանափակման: Ընդ որում՝ վարձու աշխատողներին պակաս վճարված նպաստի գումարը գործատուն վճարում է իր միջոցներից սխալը հայտնաբերելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

Վարձու աշխատողի մայրության նպաստը վերահաշվարկվում է նաեւ սույն օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում իր եկամտի վերաբերյալ վարձու աշխատողի կողմից գործատուին (նպաստը հաշվարկող եւ վճարող) լրացուցիչ տեղեկատվություն ներկայացնելու դեպքում: Այս դեպքում մայրության նպաստը վճարվում է սույն օրենքի 24-րդ հոդվածով սահմանված կարգով:

Ավել վճարված նպաստի գումարի հետպահումները կատարվում են գործատուի կամ լիազոր մարմնի որոշմամբ, եթե նպաստը նշանակվել եւ վճարվել է հաշվարկային մեխանիկական սխալների կամ նպաստը ստացողի կողմից սխալ տեղեկություններով փաստաթղթեր ներկայացնելու հետեւանքով:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ավել վճարված գումարը հետ է պահվում ամբողջությամբ: Հետպահումը կատարվում է նպաստի հաջորդ վճարումներից կամ աշխատավարձից, ընդ որում՝ հետ պահվող գումարի չափը յուրաքանչյուր անգամ չի կարող գերազանցել վճարվող նպաստի կամ աշխատավարձի 20 տոկոսը:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ո՞րն է Վճռաբեկ դատարանի իրավասությունը:

Գեղամ Գալստյան (35 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Վճռաբեկ դատարանը վերանայում է Վերաքննիչ դատարանի, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ իր կայացրած դատական ակտերը: Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում վերանայելու միջոցով՝

1) ապահովում է օրենքների եւ այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը,

2) վերացնում է մարդու իրավունքների եւ ազատությունների հիմնարար խախտումները:

Օրենքների եւ այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը Վճռաբեկ դատարանն ապահովում է, եթե առկա է իրավունքի զարգացման խնդիր, կամ տարբեր գործերով դատարանների կողմից նորմատիվ իրավական ակտը տարաբնույթ է կիրառվել կամ չի կիրառվել տարաբնույթ իրավաընկալման հետեւանքով:

ՀՀ ընդհանուր իրավասության դատարան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Մարդու իրավունքների եւ ազատությունների հիմնարար խախտումները վերացնելու նպատակով Վճռաբեկ դատարանը վերանայում է այն դատական ակտերը, որոնք խաթարում են արդարադատության բուն էությունը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Կոմիտասի անվան կամերային երաժշտության տունը համալրվել է նոր ռոյալով. գործիքը բանալիով բացելու եւ այն առաջինը փորձարկելու պատիվը վերապահվել է մաեստրո Տիգրան Մանսուրյանին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+3 + 8 +18 + 23
Կոտայքի լեռներ	+4 + 7 +18 + 21
Կոտայքի նախալեռներ	+11 + 13 +22 + 24
Գեղարքունիք	+4 + 8 +17 + 20
Լոռի	+6 + 10 +18 + 21
Տավուշ	+ 8 + 13 +20 + 24
Արագածոտնի լեռներ	+ 4 + 7 +17 + 20
Արագածոտնի նախալեռներ	+ 10+ 14 +21 + 25

Արարատ	+ 13 + 15 +25 + 27
Արմավիր	+ 12 + 14 +25 + 27
Վայոց ձորի լեռներ	+ 6 + 8 +17 + 20
Վայոց ձորի նախալեռներ	+ 13 + 15 +25 + 27
Սյունիքի հովիտներ	+ 16 + 18 +23 + 26
Սյունիքի նախալեռներ	+ 8 + 11 +19 + 21
ԼՂՀ	+ 8 + 10 +17 + 19
Երեւան	+ 18 + 20 + 23 + 25

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **25.9.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*